



## ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՍԱՆԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

ԲԱ.ՁԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

(III դասարանի սան)

### ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ



Քաջիկ Գևորգյան

  
այաստանը Արդակունյաց դի-  
նաստիարի անկումից հետո  
կռվախնձոր է գառնում իրեն  
սահմանակից երկու հզոր պե-  
տությունների՝ Պարսկաստանի և Բյուզան-  
դական կայսրության միջև։

Պարսկաստանի պետական գործիչները,  
երկյուղ կրելով, որ հայերը, քրիստոնեության  
շնորհիվ Հակված լինելով Բյուզանդական  
կայսրության կողմը, պիտի ձգտեն քաղաքա-  
կանապես էլ նրա հետ կապվելու, որի հետե-  
լվանքով Պարսկաստանը կերպներ ստրատե-  
գիական կարենոր նշանակություն ունեցող մի  
երկիր, մտածում են քրիստոնեությունը ար-  
մատախիլ անել Հայաստանում։ Այս նպա-  
տակով պարսից պետությունը, Հապու՛ Բ-ի  
օրոք, IV դարի քառասնական թվականներից  
սկսած քրիստոնեության գեմ կրոնական ծա-  
վալուն Հայածանք է կազմակերպում Հայա-  
տանում։ Այդ Հայածանքները էլ ավելի կա-  
տաղի բնույթ են ընդունում Վ դարի առաջին  
կերպ ակսած, երբ պարսիկները աշխատում  
էին քրիստոնեության փոխարեն մազդեկա-  
կանությունը արմատավորել Հայաստանում և  
հայերին իրենց մեջ ձուլելով, ոչնչացնել նը-

րանց ազգային անկախությունն ու ինքնու-  
րույնությունը։

Լավ չէր հայերի փոխարարերությունը  
նաև արևմտյան հարևանի հետ։ Կրոնական  
կապերով կապված լինելով Բյուզանդիայի  
հետ ու սեփական գիր ու գրականություն չու-  
նենալով, հայերը ննիմակա էին իրենց ազգա-  
յին լեզուն կորցնելու և բյուզանդացիների  
հետ ճուղվելու վանագին։

Հայ ժողովրդի ազգային ինքնուրույնությա-  
նը երկուամեք սպառնացող այս ահավոր վր-  
ատնգի առաջն աննելու համար, հայ հոգևոր  
րականության ականավոր ներկայացուցիչներ  
Սահմակ Փարթի կաթողիկոսի և Մեսրոպ Մաշ-  
տոց վարդապետի շանքերով Հորինվում է  
հայկական արքունիքը, Թարգմանվում Աս-  
տուածաշունչը և այլ հիեղեցական զրքեր. իսկ  
սրանց թարգմանիչ աշակերտները հիմք են  
դնում հայ ազգային գրականության, հատ-  
կապես պատմագրությանը, որի շնորհիվ հա-  
յերը ծանոթանում են իրենց պատմական  
փառավոր անցյալի հետ։ Հայ գիրն ու գրա-  
կանությունը նպաստում են ազգային ինքնա-  
ճանաչմանը և հայրենասիրական զգաց-  
մունքների բորբոքմանը։

Այդ հայրենասիրական զգացմունքների

պողթկումը մենք տեսնում ենք Ավարայրի պատմական դաշտում, ուր վճռվում էր հայ ժողովրդի բախտը:

Հայ նախարարներին ուղղված Միջներսեցի նամակը ուժի է հանում հայ հոգևորականությանն ու ժողովրդին: Հովսիի կաթողիկոսը Արտաշատում հրավիրում է եկեղեցական ժողով, որին մասնակցում էին նաև նախարարները: Այս ժողովում կարուկ կերպով մերժվում է կրօնափխության առաջարկը: Հայ հոգևորականության ըմբուստ ոգին և քրիստոնեությունը

պաշտպանելու պատրաստակամությունը իր արտահայտությունն է գրտել Եղիշեի հնուելու տողերում. «Յայսմ հնաւառց զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ երեստակ և ոչ մարդիկ, ոչ սուր և ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամենայն զինչ և են դառն հարածք»:

Երբ Տիգրոնից լուր է ստացվում, որ նախարարները կրօնափխի են Եղիշել և մոգերի գնդի հնու Հայաստան են վերադառնում, երկրում ծայր է առնում ապստամբական շարժման նախադարձաստությունը: Ինչպես Եղիշեն է վկայում, ապշտամբություն հրահրողը հանդիսանում էր հայ հոգևորականությունը: Հայ հոգևորական-ները շրջում էին Հայաստանի քա-

ղաքներն ու գյուղերը և ոտքի հանում ժողովրդին՝ հայրենի կրօնն ու հայրենիքի անկախությունը պաշտպանելու համար: Հայ հոգևորականությունը անողոք կոիւլ է հայտարարում բոլոր նրանց դեմ, որոնք կիսախտեին Աստծո ուխտը, կդավաճանեին հայրենիքին և կրօնափխի կլինեին. նա առաջարկում է այդպիսիների նկատմամբ անխնա դատաստան տեսնել առանց ուշադրություն դարձնելու արյունակցական, ազգակցական ու այլ կապերի վրա. «Ձեռն եղօր հարազատի ի մերձաւոր իւր

լիցի՝ որ անցեալ իցէ րաս ովաս պատիրանին Սսուուծոյ, և մի՛ խնայեսցէ հայր յորդի և մի՛ ակն առեւցու ուրդի հօր պատույն: Կին կրունեսցի ընդ աղճ ամուսնոյ և ծառայ դարձգի՝ ընդդիմ տեան իւրոյ», — գրում է Եղիշեն:

Պարսիկ մոգերի առաջին փորձը, Մալկուտն գավառի Անգլ գյուղաքաղաքում ասրուցան հիմնելու, անհաջողության է մատնվում. Ղեկոնդ Երեցի դրդմամբ ժողովուրդը հարձակվում է մոգերի վրա, ջարդում, վիրավորում նրանց ու փախցսում: Եվ այսպես հայ հոգեվրիստունությունը ամենուրեք դիմադրում է կրոնափոխության փորձերին:

Ավարայրի դաշտում հայ հոգևորականությունը մարտնչում էր ազգի ու հավատի պաշտպան մարտիկների շարքերում. Ավարայրի դաշտ էին իշել Հովսիի կաթողիկոսը, Ղեկոնդ Երեցը և բազմաթիվ այլ հոգևորականներ: Ղեկոնդ Երեցը պատարագ է մատուցում ու հրաշում ճառ արտասանում քաջալերելով հայ զորքին:

Ավարայրի ճակատամարտից հետո Պարսկաստան գերի տարված հոգևորականներին անասելի տանշանքների են ենթարկում, ստիպելով որ ուրանան իրենց հավատը, բայց մեր

արի հոգևորականները անդրդմելի են մընում իրենց հավատքի մեջ ու նահատակվում Պարսկաստանի Նյուշապուշ քաղաքից ոչ հեռու՝ անապատի մեջ: Նահատակվածների թվումն էին Հովսենի կաթողիկոսը և Ղեկոնդ Երեցը, որոնք Վարդանանց շարժման անմիջական ներշնչողներն էին հանդիսանում: Հովսիի կաթողիկոսը, որ Ս. Սահակի աշակերտն ու հաջորդն էր, մինչև վերջն էլ հավատարիմ մնաց Սահակ Մեսրոպյան գաղափարնե-



Անդ Երեց

րին, իր անձը շխնայելով հավատքի ու հայրենիքի պաշտպանության համար Հովհանիկ ավողի կաթողիկոսի մերձավոր աջակից Ղևոնդ Երեցը, որ հայ հոգևորականի լավագույն տիպարն է հանդիսանում, Վարդանանց շարժման ժամանակ ցուցաբերեց անսպառ եռունդ ու կաղմակերպչական մեծ տաղանդ: Ղևոնդ Երեցի ու Վարդանի անունները շաղկապված են միմյանց. չնայած սրանցից մեկը զինվորա-

կան էր, իսկ մյուսը հոգևորական, բայց միևնույն սերը հավատի ու հայրենիքի հանդեպ իրար է ձուլել այս երկու հերոսական անունները:

Վարդանանք ու Ղևոնդանք անմեռ են... դարեր են սահել ու անցել և դեռ կանցնեն, բայց նրանց մղած պայքարը օտար բռնակալների գեմ հավետ չի մոռանա հայ ժողովորդը:



## ՌՈՒԲԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

(III դասաւաճի սան)

## ՎԱՐԴԱՆԱՆՔ

Հայ ժողովորդը իր անցյալի դարավոր ազատագրական պայքարի ընթացքում հայրենիքի ու հայրենի եկեղեցու անկախության համար մարտնչող բազմաթիվ հերոսներ է ունեցել, բայց դրանցից և ոչ մեկի անուն այնպես չի անմահացել, ինչպես Վարդան Մամիկոնյանինը:

451 թիվից սկսած մինչև մեր օրերը հայ ժողովորդը ազատագրական պայքարի մեծ ուղի է անցել և այդ պայքարի ընթացքում փառքի զափնիներով պսակված քաջարի հերոսների մեջ միշտ էլ տեսել է անմահ Վարդան Մամիկոնյանի վեհ ու հիասքանչ կերպարը:

Վարդանանք մեռան, հավետ ապրելու համար. ինչպես Եղիշեն է ասում ՇՄՖԻ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է: Որ զմահ ոչ զիտէ՝ Երկնչի ի մահուանէ, իսկ որ զիտէ զմահ, ոչ Երկնչի ի նմահէ: Վարդանանց պատերազմը մի անլեռներ գոյամարտ էր մահվան դեմ, հանուն վեհ գաղափարի, հանուն հայրենի սրբությունների պաշտպանության: Վարդանի մեջ մարմնացած ենք տեսնում մարտնչող հայ ժողովորդը, ժողովորդ, որի մոտ երբեք շմարեց պայքարի ու ազատագրության տեսնը, ժողովորդ, որ երբեք չհաշտվեց օտար բռնակարների տիրապե-

## ՌՈՒԲԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

տության հետ: Վարդանանք իրենց մահվամբ հաղթանակ ապահովեցին: Ավարայրի ճակատամարտից որոշ ժամանակ անց, երբ տեղի ունեցավ երկրորդ կրօնական պատերազմը, Հայերը խրախուաված Վարդանանց օրինակով պատերազմի ելան կահան Մամիկոնյանի գլխակորությամբ և պարտության մատուցին պարսից բանակու: Այս հաղթանակը հայերին բերեց կրօնական ազատություն և ինքնուրույնություն:

Դարեր անցան... պարսիկ աշխարհակալներին փոխարինեցին նոր թշնամիներ՝ արաբներածողները, որոնք շատ բռնություններ ու անիրավություններ դորձնեցին, բայց հայ ժողովորդի ըմբռուս ոգին ընկճել շկարողացան: Թե՛սորոս Շշտունին, Խովթեցի Հովհանը և շատ ուրիշները, ոգեշնչված Վարդանի սիրակործությամբ, բազմիցս հաղթանակ տարան անարդ թշնամու դեմ: Արաբական տիրապետության ժամանակշրջանում հայ ժողովորդը հերոսական պայքարի նոր դըրվագներ է ստեղծում. այդ պայքարը արտացոլված ենք տեսնում ՇՄՖԻ Դավիթի ժողովության էպոսում. հանձինս Դավիթի հայ ժողովորդը պատկերել է իր հերոսական ընդվկամը արաբական բռնակալների դեմ: Դավիթի կերպարում մարմնավորված ենք տես-